

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

30.06.2017  
Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 21 անդամներից 19-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. 2017թ. ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում:
2. 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկան մասնագիտական ամբիոնների վարիչները:

«Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի վարիչ Դ. Թինոյանը նշեց, որ ընթացիկ ուստարում ամփոփիչ ատեստավորման քննության և ավարտական աշխատանքների պաշտպանություն է իրականացվել «Պատմություն» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման համակարգերում: Առկա ուսուցմամբ «Հայոց պատմություն» առարկայից ամփոփիչ ատեստավորման քննություն է հանձնել թվով 17 ուսանող: 8 ուսանող ստացել է «գերազանց», 8-ը՝ «լավ», 1-ը՝ «բավարար»: «Անբավարար» գնահատական չի գրանցվել: Ավարտական աշխատանք պաշտպանել է նույնքան ուսանող: Ուսանողներից 10-ը ստացել է «գերազանց», 6-ը՝ «լավ», 1-ը՝ «բավարար» գնահատական: «Անբավարար» գնահատական չի գրանցվել: Հեռակա ուսուցման բաժնում «Հայոց պատմություն» առարկայից պետական քննություն է հանձնել 39 ուսանող: Ուսանողներից 2-ը ստացել են «գերազանց», 16-ը՝ «լավ», 21-ը՝ «բավարար» գնահատական: «Անբավարար» գնահատական չի գրանցվել: Ավարտական աշխատանք պաշտպանել է 39 ուսանող: 7 ուսանող ստացել է

«գերագանց», 14-ը՝ «լավ», 18-ը՝ «բավարար»: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

Զեկուցողը ավելացրեց, որ քննական հաճնաժողովի նախագահ պ.գ.դ., պրոֆեսոր Համլետ Գևորգյանը հիմնականում գոհ է մնացել ավարտական աշխատանքների գիտական մակարդակից, ուսանողների պատրաստվածությունից ու ցուցաբերած գիտելիքներից՝ միաժամանակ առաջարկել, որ առաջադրվեն դեռևս պատշաճ մակարդակով չուսումնասիրված թեմաներ, որտեղ ինքնուրույն աշխատանքը ավելի շատ կլինի:

«Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի վարիչ Վ. Ավագյանը նշեց, որ տարեսկզբին արդեն վերջնական հաստատվել են ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները, նշանակվել են ղեկավարները: Մահմանվել է գրաֆիկ կուրսային և ավարտական աշխատանքների ղեկավարների և ուսանողների հանդիպման համար, որը, ինչպես նշեց զեկուցողը, միշտ չէ, որ պահպանվել է. պատճառը ուսանողների երբեմն անհասկանալի անտարբերությունն է, անպատասխանատվությունը:

Զեկուցողը նշեց, որ ամեն ինչ իրականացվել է ըստ գրաֆիկի, կազմակերպվել է նախապաշտպանություն, որը սովորաբար էական նշանակություն է առնում ուսանողների պաշտպանությունը պատշաճ մակարդակով անցկացնելու: Վկան հենց բուն պաշտպանությունն ու ամփոփիչ քննությունները:

Զեկուցողը նշեց, որ առկա բաժնում 2016-2017 ուստարվա ավարտական կուրսի ուսանողների ամփոփիչ քննություններն ու ավարտական աշխատանքների պաշտպանությունը տեղի են ունեցել մայիսի 29-30-ին: Այդ գործընթացը հատկանշվել է ուսանողների պատրաստվածության բարձր մակարդակով, ընդգծված պատասխանատվությամբ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Լ. Միրզոյանը իր գոհունակությունն է հայտնել քննական գործընթացի արդյունքների վերաբերյալ՝ մասնավորապես ընդգծելով այն հանգամանքը, որ շրջանավարտների գիտելիքները խորն էին, որակական մակարդակը՝ բարձր: Լավ տպավորություն է թողել ուսանողների բանավոր խոսքը, որ սահուն էր և տպավորիչ: Իհարկե, ավարտական որոշ աշխատանքներում նկատելի էին գրքայնություն, ինքնուրույնության պակաս և այլ որակի առանձնակի թերություններ:

Զեկուցողը ներկայացրեց շրջանավարտների ստացած գնահատականները. ամփոփիչ քննությանը մասնակցած 18 շրջանավարտներից 1-ը ստացել է «գերազանց», 12-ը՝ «լավ», 5-ը՝ «բավարար» գնահատական: Անբավարար» գնահատական չի գրանցվել:

Ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 18 շրջանավարտներից 3-ը ստացել է «գերազանց», 15-ը՝ «լավ»: «Բավարար» և «անբավարար» գնահատականներ չեն գրանցվել:

Զեկուցողը նաև ներկայացրեց հեռակա ուսուցման բաժնի այս տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանությանն ու պետական քննությունների հետևյալ պատկերը. «Հայ գրականություն» առարկայի ամփոփիչ քննությանը մասնակցած 12 շրջանավարտներից 4-ը ստացել են լավ, 8-ը՝ բավարար գնահատականներ, իսկ «Հայոց լեզու» առարկայի ամփոփիչ քննությանը մասնակցած 21 շրջանավարտներից 6-ը՝ լավ, 15-ը՝ բավարար գնահատականներ: Անբավարար գնահատական չի գրանցվել: Իսկ հայոց լեզվից ավարտական աշխատանքի պաշտպանությանը մասնակցած 12 շրջանավարտներից 3-ը ստացել են լավ, 9-ը բավարար, իսկ հայ գրականության ավարտականներից 14-ը՝ բավարար, 7-ը լավ գնահատականներ:

Հանձնաժողովի նախագահ Լ. Միրզոյանը հեռակա ուսուցմամբ ուսանողների պատասխաններից ընդհանուր առմամբ դժգոհ չի եղել, առավել ևս, որ եղել են տպավորիչ պատասխաններ:

«Անգլերեն լեզու և գրականություն» ամբիոնի վարիչ Ք. Հարությունյանը նշեց, որ 2016–2017 ուստարվա սկզբին վերանայվել և հաստատվել են առարկայական ծրագրերը առկա և հեռակա ուսուցման համակարգում դասավանդվող առարկաների համար: Տարեսկզբին կազմվել են բակալավրիատի պետական ամփոփիչ քննությունների հարցաշարերը, ինչպես նաև համապատասխան ժամկետում կազմվել են եզրափակիչ և միջանկյալ քննությունների հարցաշարերը և տրվել ուսանողներին:

Ավարտական կուրսի ուսանողների հետ կազմակերպվել են ակնարկային դասընթացներ, որոնք իրականացվել են բարեխղճորեն: Մինչև ուսումնական տարվա սկիզբը կազմվել և հաստատվել են կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները: 2013–2017 ուսպլանով նախատեսված, ավարտական կուրսի

ուսանողներն առաջին կիսամյակում ունեցել են կուրսային աշխատանքի պաշտպանություն, որն ի տարբերություն մյուս տարիների, գրվել են անգլերենով: Սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ուսանողները հանդիպել են իրենց ղեկավարների հետ, իրականացվել են ավարտական աշխատանքի նախապաշտպանություն:

Զեկուցողը նաև նշեց, որ ընթացիկ ուստարում պետական քննություններն ու ավարտական աշխատանքների պաշտպանություններն անցել են բարձր մակարդակով, ինչը նշել է նաև քննական հանձնաժողովի նախագահ Լիլիթ Բադայանը, ով իր գոհունակությունն է հայտնել ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ: Նա նշեց, որ աշխատանքները գրվել են անգլերեն լեզվով, մեծ մասում ներկայացված էին լեզվաբանական ուսումնասիրությունների արդի խնդիրներ և փորձ էր արված նորովի և տարբեր տեսանկյուններից ներկայացնել դրանք: Ամփոփիչ ավարտական քննությանը մասնակցած 29 ուսանողից 9-ը ստացել են «գերազանց» գնահատական, 18-ը՝ «լավ», 2-ը՝ «բավարար», անբավարար գնահատական չի եղել: Ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքները հետևյալն են. 12-ը ստացել են «գերազանց», 15-ը՝ «լավ» և 2-ը՝ «բավարար»: Հատկանշական է նաև այն փաստը, որ ԵՊՀ Ռեզնանագերմանական բանասիրության ֆակուլտետի Անգլիական բանասիրության ամբիոնի մի քանի դասախոսներ, որոնք ներկա են գտնվել ավարտական աշխատանքների պաշտպանությանը շատ բարձր են գնահատել ուսանողների կատարած աշխատանքը:

«Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոնի վարիչ Լ. Հարությունյանը նշեց, որ ամփոփիչ ատեստավորման քննություններն անցել են պատշաճ մակարդակով, քննական կարգի խախտման որևէ դեպք չի արձանագրվել: Ուսանողները պատասխանատվությամբ էին պատրաստվել քննության և ցուցաբերել են բարձր ակտիվություն: Ամփոփիչ ատեստավորման քննությանը մասնակցել են Մ/Հ 4-րդ կուրսի 19 ուսանող: «Գերազանց» գնահատական է ստացել 4 ուսանող, 11-ը՝ «լավ» 4-ը՝ «բավարար»: Անբավարար գնահատական չի գրանցվել:

Ամբիոնի վարիչը նաև նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել է պատշաճ մակարդակով, քննական կարգի խախտման որևէ դեպք չի արձանագրվել: Ավարտական աշխատանքների պաշտպանությանը

մասնակցած 19 շրջանավարտներից 7 ուսանող ստացել են «գերազանց», 12-ը՝ լավ: Անբավարար գնահատական չի գրանցվել:

Զեկուցողը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունից հետո քննական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Սողոյանը ներկայացրել է իր առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ, և հայտնել իր գոհունակությունը տարվող աշխատանքներից:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» ամբիոնի վարիչ Ռ. Միրզոյանը նշեց, որ 2016–2017 տարեկգրին կազմվել են բակալավրիատի պետական ամփոփիչ քննությունների հարցաշարերը, ինչպես նաև համապատասխան ժամկետում կազմվել են եզրափակիչ և միջանկյալ քննությունների հարցաշարերը և տրվել ուսանողներին:

Ավարտական կուրսի ուսանողների հետ կազմակերպվել են ակնարկային դասընթացներ, որոնք իրականացվել են բարեխղճորեն: Մինչև ուսումնական տարվա սկիզբը կազմվել և հաստատվել են կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները: 2013–2017 ուսպլանով նախատեսված, ավարտական կուրսի ուսանողներն առաջին կիսամյակում ունեցել են կուրսային աշխատանքի պաշտպանություն, որն ի տարբերություն մյուս տարիների, գրվել են ֆրանսերենով: Սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ուսանողները հանդիպել են իրենց ղեկավարների հետ, իրականացվել են ավարտական աշխատանքի նախապաշտպանություն:

Զեկուցողը նաև նշեց, որ ընթացիկ ուստարում պետական քննություններն ու ավարտական աշխատանքների պաշտպանություններն անցել են բարձր մակարդակով, ինչը նշել է նաև քննական հանձնաժողովի նախագահ Ա. Ստեփանյանը, ով իր գոհունակությունն է հայտնել ավարտական աշխատանքների թեմաների վերաբերյալ: Նա նշեց, որ ամփոփիչ ավարտական քննությանը մասնակցած 10 ուսանողից 4-ը ստացել են «գերազանց», 4-ը՝ «լավ», 2-ը՝ «բավարար», անբավարար գնահատական չի եղել: Ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքներով 5 ուսանող ստացել է «գերազանց», 5-ը՝ «լավ»:

## ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., Լ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

Մասնաճյուղի տնօրեն Ս. Առաքելյանը բավարար համարեց կատարված աշխատանքները և նշեց, որ պետք է մեծ ուշադրություն դարձնել մինչառարկայական կապերին և կարևորել ոչ մասնագիտական կուրսերում դասավանդվող առարկաները:

Ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը արձանագրվեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունը և ամփոփիչ ատեստավորման գործընթացը ունեցել են պատշաճ ակադեմիական մակարդակ և բավարար կազմակերպվածություն:

Ուսանողները ամփոփիչ քննություններին ներկայացել են պատրաստ: Մեծամասնությունը անհրաժեշտ չափով ուսումնասիրել էր պահանջվող գրականությունը և օժանդակ նյութերը: Կային նաև թերի պատրաստված ուսանողներ: Վերջիններս հիմնականում եղել են ուսումնառության ընթացքում ակադեմիական ցածր առաջադիմություն գրանցած սովորողներ: Դեկանը շեշտեց, որ առաջընթացը պայմանավորված է մի շարք կարևոր աշխատանքներով, որոնք տարիների ընթացքում կանոնավորապես իրականացվում են ամբիոններում: Առաջին հերթին դրական դեր են ունեցել նախորդ ամիսներին կազմակերպված նախապաշտպանությունները: Ամբիոնների վարիչները գործող ժամանակացույցով իրականացրել են նախապաշտպանություններ /որոշ ամբիոններում մի քանի անգամ/, որոնց ընթացքում շտկվել են նկատված սխալներն ու թերությունները: Որակի բարձրացմանը, անշուշտ, նպաստել են ավարտական և կուրսային աշխատանք կատարելու մեթոդական ձեռնարկների առկայությունը ամբիոններում, ինչպես նաև գնահատման հստակ չափանիշերի ձևակերպումը:

Ա. Ներսիսյանը նշեց նաև արձանագրված թերությունները, որոնք վերաբերում էին քննական հարցաշարերին և հարցատոմսերին: Մատնանշվեցին նաև այլ թերություններ, որոնք գերազանցապես ունեին տեխնիկական բնույթ: Այդ ամենը անհրաժեշտ է նկատի առնել հաջորդ տարիների քննությունների հարցաշարերն ու հարցատոմսերը կազմելիս:

## ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2017թ. ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գնահատել բավարար:

## ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց քննաշրջանի կազմակերպական աշխատանքների ընթացքի մասին: Նշվեց, որ գարնանային քննաշրջանի ընթացքը եղել է պատշաճ կազմակերպված և գտնվել է դեկանատի մշտական ուշադրության կենտրոնում: Ընդգծվեց, որ տարեցտարի բարձրանում է ստուգարքներին և քննություններին ուսանողների պատրաստվածության մակարդակը: Նշված ժամանակահատվածում ֆակուլտետի առաջադիմությունը կազմել է 90.46%: Դա բացատրվում է նրանով, որ տվյալ առարկայի նյութը մաս-մաս յուրացնելով, կիսամյակի ընթացքում պարբերաբար միջանկյալ քննություններ հանձնելով, ուսանողը եզրափակիչ քննությանը ներկայանում է պատշաճ գիտելիքներով: 2016-2017 ուստարվա ձմեռային քննաշրջանին մասնակցել է 325 ուսանող: Միայն գերազանց գնահատականներ են ստացել 37 ուսանող, գերազանց և լավ՝ 101, խառը գնահատականներ՝ 149, իսկ միայն բավարար՝ 7 ուսանող: 31 ուսանողներ չեն կարողացել հանձնել քննությունները և իրենց ուժերը կփորձեն լուծարքային շրջանում: Ջեկուցողը նշեց, որ մեկ անբավարար է ստացել 22 ուսանող, երկու անբավարար՝ 6, իսկ երեք և ավելի՝ 3 ուսանող: Դրանց մի զգալի մասը անբավարար պատրաստվածության պատճառով չի ներկայացել ստուգարքներին և քննություններին: Մի մասը անբավարար է ստացել ընթացիկ քննությունների արդյունքներով: Ջեկուցողը ընդհանուր գծերով ներկայացրեց ակադեմիական պարտքերի պատկերը, որը ըստ մասնագիտությունների հետևյալն է.

- Պատմություն՝ 6
- Հայոց լեզու և գրակ.՝ 4
- Անգլերեն լեզու և գրակ.՝ 7
- Օտար լեզու և գրակ.՝ 3
- Տարրական մանկ. և մեթոդիկա՝ 7

- Ֆրանս. լեզու և գրակ.՝ 4

Պատմություն II, Հայոց լեզու և գրականություն III, Հոգեբանություն II և Մանկավարժություն և հոգեբանություն III կուրսերի ուսանողները ցուցաբերել են 100% բացարձակ առաջադիմություն:

#### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

#### **ԼՍԵՑԻՆ.**

Օրակարգում ընդգրկված էր նաև ընթացիկ երկու հարցեր՝

ա) Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2017-2018թթ անհատական ծանրաբեռնվածությունների քննարկման հարցը,

բ) «Անգլերեն լեզու և գրականություն» ամբիոնի դասախոս Ս. Աբրահամյանի «English for Art Students («Անգլերենը արվեստի բաժնի ուսանողների համար»)» ուսումնական ձեռնարկի հրատարակության ներկայացնելու հարցը:

Ընթացիկ առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Ձեկուցողը հայտնեց, որ ֆակուլտետի հինգ ամբիոններում ժամանակին ավարտվել են դասախոսների 2017-2018թթ. ուսումնական տարվա անհատական բեռնվածությունների կազմումը: Մինչ առարկաների բաշխումը բոլոր ամբիոններում տեղի են ունեցել քննարկումներ: Անհատական բեռնվածության հիմքում դրվել է գիտական աշխատանքների ուղղվածությունը և գիտական նախասիրությունը: Խնդիր դրվեց մինչև ուսումնական տարվա սկիզբ ունենալ դասավանդելիք առարկայի ամբողջական փաթեթը՝ պորտֆոլիոն: Շեշտվեց նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է դասավանդման նոր մեթոդների ներմուծումը, նոր տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման գործընթացում:



## **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, մ.գ.թ. Լ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

Ելույթ ունեցողները հայտնեցին, որ անհատական բեռնվածությունը կազմվել է մանրամասն քննարկումներից հետո:

Ընթացիկ երկրորդ հարցի վերաբերյալ Ա. Ներսիսյանը ներկայացրեց «Անգլերեն լեզու և գրականություն» ամբիոնի դասախոս Ս.Աբրահամյանի «English for Art Students («Անգլերենը արվեստի բաժնի ուսանողների համար»)» ուսումնական ձեռնարկի հրատարակության ներկայացնելու հարցը: Նա նշեց, որ այն նպատակաուղղված է խորացնելու և ամրապնդելու ուսանողների լեզվական գիտելիքները, հարստացնելու բառապաշարը, զարգացնելու նրանց հաղորդակցման հմտությունները բանավոր և գրավոր խոսքում: Ձեռնարկը կօգնի ուսանողներին ընդլայնելու աշխարհայացքը, կնպաստի արվեստի ճյուղերի և ուղղությունների իմացությանը:

Նշվեց, որ ձեռնարկը գրախոսվել է Բ.գ.թ., դոցենտ Ք. Մ. Հարությունյանի և ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ. Ս. Ռ. Խասապետյանի կողմից:

Ա. Ներսիսյանը հավելեց, որ Ս.Աբրահամյանը հրատարակել է 3 ուսումնական ձեռնարկ /համ.՝ Ս.Էվինյան, Է.Թեմրազյան/, և 4 գիտական հոդված:

## **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, դասախոսներ Ս.Էվինյանը և Է.Թեմրազյանը: Արտահայտվողները առաջարկեցին երաշխավորել Ս.Աբրահամյանի «English for Art Students («Անգլերենը արվեստի բաժնի ուսանողների համար»)» ուսումնական ձեռնարկը և հանձնել տպագրության:

## ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) մասնագիտական ամբիոնների 2017-2018թթ. անհատական ծանրաբեռնվածությունների հարցը ընդունել ի գիտություն: Ըստ այդմ դասախոսներին հանձնարարել նոր ուսումնական տարվա համար կազմելու անհատական զարգացման և աշխատանքային պլանները, մինչև օգոստոսի վերջ նախապատրաստել և ամբիոն ներկայացնել դասընթացների փաթեթները:

բ) Միջնորդել մասնաճյուղի գիտխորհրդին Ս. Աբրահամյանի «English for Art Students («Անգլերենը արվեստի բաժնի ուսանողների համար»)» ուսումնական ձեռնարկը ներկայացնելու հրատարակության:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Ներսիսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. Աղաբաբյան